ՄԱՐԻ ՌՈԶ ԱԲՈՒՍԵՖԵԱՆ

Ո՞Վ Է ՀԱՅԸ
Հ. ՕՇԱԿԱՆԻ՝ «ՕԱԿ ՊՏՈՒԿԸ» ՎԵՊԸ

Հարկ է ասել, որ Օշականի վեպերի ստեղծման մեջ, էական դեր են խաղացել ռուս գրականության հսկաները՝ Տոլստոյը եւ Դոստոեւսկին, որոնց գործերին ծանոթանալուց հետո է, որ նրան այլեւս ոչ միայն չեն հետաքրքրել փոքր ծավալի գործերը՝ պատմվածքներն ու վիպակները, այլ նաեւ չեն բավարարել այն ասելիքներն ու հարցադրումները, այն ոճը, այն մեթոդը, որով մինչ այդ ստեղծագործել է ինքը: Եվ 25 տարվա անդուլ ինքնաշխատությունից, հղկումից, հասունացումից հետո միայն կրկին գրիչ է վերցրել իր վեպերը ստեղծելու համար: Ինչո՞ւ հատկապես վեպ: Ժանրն իր տարողությամբ, խորությամբ, դեպքերի, տիպարների բազմազանությամբ ու հոգեբանական պեղումներով, հնարավորություն էր տալիս գրողին ամբողջ խորությամբ ու ծավալով բացվելու: Ինքնաձանաչման այն տարիները ձեւավորել, կերպարանավորել, բացել էին նրա գրական շտեմարանը, նրա անորոշ, բայց հարուստ զգացումներին ու երեւակայությանը որոշակի ուղղություն ու ձեւ տվել, սրել նրա ստեղծագործական անհատականությունը: Իր կենսագրության մեջ ուշադրության արժանի այս երեւույթը, որը իր կարգապահ, սիստեմատիկ, մտածված աշխատանքով է առաջնորդվել, կազմավորել է իր մտածումներն ու սկզբունքները, հայտնաբերել իր ուղղությունն ու ոճը: Նա իր վիպային մուտքով ոչ միայն սկիզբը դրեց իր վեպերի, այլ նաեւ արեւմտահայ վիպագրությանը առաջնորդեց դեպի նոր ուղղությունը: Համաշխարհային գրականության մեջ դժվար թե հանդիպենք այս ճանապարհով իր վիպային արժեքները ստեղծած մեկ այլ վիպասանի:

Ինչպես ինքն է բնորոշում՝ **«վէպը իրմով շրջան կը փոխէ, այսինքն՝ կը փորձէ նոր՝ յանդուգն ճարտարապետութիւն մը, եթէ ոչ աշխարհի գրականութեան, գէթ հայ գրականութեան վրայ»**[1]:

Ո՞րն էր այդ փոփոխությունը, այդ հանդուգն ճարտարապետությունը: Առաջին հերթին իր գրական մտածողությունը: **«Գիրքերու պատմութիւնները ինծի համար գրականութեան չեն պատկանիր, այլ՝ կեանքին պատմութիւններն են»**[2]: Ուրեմն գրողը իրական կյանքի պատմությունները գրականություն փոխանցողն է:

1 «Համապատկեր», էջ 218:
2 «Համապատկեր», հ. 10:

Իսկ ո՞վ է վիպողը իր հասկացողությամբ: **«Վիպողը միայն հաճելի ընթերցումներ մատակարարող մունետիկ մը չէ»**[1],- հայտարարում է նա: Պարզ է, որ նա դեմ է իր վեպերը հասարակության ճաշակին հարմարեցնելուն: **«Կեանքը կապրինք կամ զայն կը տանինք, կը փոխադրենք կեանքէն վեր տարածութեան մը վրայ»**[2]: Այդ «կեանքեն վեր տարածությունը» անշուշտ գրականությունն էր եւ իր ձգտումը՝ գրական միջոցներով կյանքի իրական վերարտադրությունը՝ արվեստի փոխակերպելը:

Իր ստեղծագործական մեթոդով նա փոխեց վեպի կերտման ընդունված, քարացած հասկացողությունը: Ընդհանուրի մեջ անհատի վիճակը դարձրեց կենտրոնական, տեսանելի, շոշափելի եւ մարդկային ներաշխարհը դարձրեց իր վիպական կտավը: Այդ կտավի վրա տարածեց մեզնից խլված մեր քաղաքների, գյուղերի ու գավառների ապրված, անհետացած, բայց մեր մեջ իր դրոշմը անջնջելիորեն թողած կյանքը: Այդ կյանքը նա իմաստավորեց բարքերով, ավանդույթներով, այնտեղ ապրող մարդկանց խոհերով, ճակատագրերով, լավ ու վատ հարաբերություններով, սերերով, տարփանքներով, վրեժխնդրությամբ, ինքնազոհ հերոսություններով: Այդ հարաբերություններում լուծեց ճակատագրի, կյանքի ու մահվան, լինելիության ու շարունակություն ստեղծելու համամարդկային խնդիրներ:

Ահա այս արժեքների վրա հիմնված իր վեպերից «Ծակ Պտուկը», «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտուլլահ»-ը ժամանակագրական առումով գրված են իրարահաջորդ հերթականությամբ, անմիջապես հրատարակվելով 1928-1934 թթ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրի եւ Կահիրեի «Հուսաբեր» օրաթերթի քսանհինգ համարներում: 1973 թ. Բեյրութում այս երեք վեպերը հավաքագրվել են մեկ գրքի մեջ եւ երկու անգամ հրատարակվել «Երկեր» խորագրի տակ: Հեղինակի ձեռագիրը չգտնվելու պատճառով գրքի հրատարակիչները հիմնվել են թերթերի այդ հրատարակությունների վրա: Տվյալ ուսումնասիրությունը հիմնվում է Բեյրութի 1973 թ. Անթիլիասի այդ հրատարակության վրա:

Այս վեպերից յուրաքանչյուրը թեեւ կյանքի տարբեր երեւույթներն են բացահայտում, բայց բոլորն էլ հիմնված են մի հիմնական փիլիսոփայության՝ կյանքի հավերժական պայքարի, ապրելու եւ գոյատեւելու, մեռնելու, սերունդ ստեղծելու հավերժական երեւույթի վրա, մարդու էության ու նրա ապրումների, նրա թուլությունների ու խիզախումների վրա: Այնտեղ մենք տեսնում ենք կեցության անհավատալի պայքար անձնական, հասարակական, մարդկային եւ ազգային պատմական իրադարձություններում: Անհատի բախումը բարքերին, ազգային ինքնությունը շարունակելու պայքար, ցեղի խորհուրդ, ազգային ավանդույթ, հայի մարդկային եւ ազգային իրա-

1 «Համապատկեր», հ. 10, էջ 95:
2 «Համապատկեր», հ. 10:

վունքների ոտնահարում, թուրքի դեմ պայքարի սկզբնավորում:

Օշականի բոլոր գործերը կյանքի իրական պատկերը լինելուց զատ, հիմնված են նաեւ իրական եղելությունների, դեպքերի վրա, որոնց ինքն ականատես է եղել կամ լսել ուրիշներից: Հիշյալ երեք՝ «Ծակ Պտուկը», «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտուլլահ» վեպերը նույնպես իրական դեպքերի վրա ստեղծված գործեր են, որոնք իր գրչի զորությամբ նոր իմաստ ու շունչ են ստացել:

«Միջավայրի ու տիպերի հնարավորին չափ իրական պատկերման հակումը շաղախվում է նրանց հոգեկան աշխարհի ներքին անտեսանելի շարժումների, ենթագիտակցական մղումների մանրամասներին, նրանց արարքների բնախոսական պատճառաբանությանը»,- գրել է հայրենի գրականագետ Ս. Թոփչյանը նրա ստեղծագործությունների մասին[1]:

Եվ իրապես այդ շաղախով է ստեղծված իր «Ծակ Պտուկը» վեպը: Վեպի 320 էջերը, որոնք ընդամենը երեք ամսում են գրված, ոչ միայն մեր ձեռքից խլված, մեր գավառներից մեկի բարքերի, ազգային մեր կորած հարստությունների փրկության ճիգ է, այլ պատում է մեր ժողովրդի ոգեղեն պաշարներով հագեցված մի ամբողջ իրականության, հավիտենության ձգտումով ծնված մարդկային փոխհարաբերությունների, նրանց մերձեցման ու նրանց էության մեջ տեղադրված արժեքների եւ նաեւ նրանց արատների մասին: Ուսումնասիրենք այդ վեպերը առանձին-առանձին:

«Ծակ Պտուկը» վեպի գործողությունը Պրուսայի տարածքում գտնվող Նիկիո լճի շրջանի զուտ հայաբնակ գյուղերից մեկում է տեղի ունենում: Այդ ժամանակ մեր գյուղերն ու գավառները դեռ անուն իսկ չեն ունեցել: Մարդիկ ապրել են բնական փոխհարաբերությամբ, մինչեւ իսկ հասարակարգային դասակարգայնությունը՝ հարուստի եւ աղքատի բաժանումը, դեռ հաստատված չէ, դա դեռ զուտ հարաբերական հասկացողություն է եւ դեռ հայ գյուղերը հայաբնակ են: Թուրքը նոր էր սկսում իր ոտնձգումները այնտեղ:

Բնութագրելով «Ծակ Պտուկը» վեպի կենսատարածքը՝ Կ. Աղաբեկյանը գրում է, որ դա «պատմական Բյութանիայի Նիկիո լճի շրջանի գյուղաշխարհն է, նշանավոր դեռեւս 325 թվին տեղի ունեցած եկեղեցական ժողովով, որտեղ հարատեւել են հիշողությունները առաջին առաքյալների, հին հավատացյալների, հավատքին շուլալված հրաշագործությունների մասին, հաստատվել են մարդկային ու կրոնական հարաբերություններ, ձեւավորվել եւ նաեւ ձեւախեղվել են սովորություններ ու բարքեր, արմատավորվել կեցության ու կացության մշակույթ»[2]:

Թուրքաբնակ գյուղերի արանքում գոյատեւող այս հայ գյուղը ապրում է համայնքային կյանքով ու մտածելակերպով, հնուց իրենց հասած բարքերով:

---

1 «Գրական թերթ», 1981, թիվ 27:

2 Կ. Աղաբեկյան, Հակոբ Օշական, էջ 94:

Ամբողջ գյուղով նրանք հավասարապես կիսում են իրար ուրախություն, վիշտ, օգնության հասնում իրար, միասին պաշտպանում գյուղը թուրքերից, եթե մեկը ավանդույթ է ոտնակոխում, ամբողջ գյուղն է դատապարտում նրան, եթե թուրքն է հարձակվում՝ կրկին ամբողջ գյուղով են պաշտպանվում: Սակայն այս միակամության մեջ, այս պարզ տեղանքում ապրող մարդիկ իրենց հոգում կրում են բարդ, խճճված մի աշխարհ, տառապանքով ու վշտով ծանրաբեռ, որն անըմբռնելի եւ անտեսանելի է մյուսին, կողքինին, հարեւանին:

Վեպի բովանդակությունը հետեւյալն է: Գյուղի հիմնադիրներից Հայրապենց գերդաստանի Հաճի Ստեփանի ընտանիքն է վեպի կենտրոնում: Ցխախոտի մաքսանենգությամբ ապրող քաջ ու գեղեցիկ այս մարդուն գյուղում հաճախ են տեսնում հարբած, թուրք կանանց կամ տղամարդու հագուստով երիտասարդ պոռնիկների (Օշականի օգտագործած բառն է) իր տուն առաջնորդելիս: Թեեւ իր անբարո վարքը դատապարտելի է գյուղացիների համար, բայց գյուղը վախից լռությամբ հանդուրժում է, գիտենալով նրա կապերը թուրք կառավարության ու ոստիկանության հետ: Մյուս կողմից՝ նրա խիզախության եւ կապերի շնորհիվ է, որ գյուղը զերծ է մնում թուրքերի ասպատակություններից: Այս խիզախ, իր անվրեպ գնդակի փառքով հայտնի, «երբեք կնիկի անուն» չտվող մարդը երկունքի գիշերը խեղդամահ է անում իր կնոջը՝ գեղեցկուհի Նազիկին, չներելով նրա դավաճանությունը մի երիտասարդի հետ: Բայց փրկվում է նրա ծնած աղջիկը, որին կոչում են մոր անունով՝ Նազիկ: Իր մոր պես գրավիչ, մոր զգլխիչ գեղեցկությամբ օժտված Նազիկը մեծանում է իր անսիրտ մեծ մոր՝ Հաճի Խաթունի խնամքի տակ, որը իր հարսի հանդեպ ունեցած ողջ ատելությունը թափում է որբ թոռան՝ Նազիկի գլխին: Մայրական սիրուց ու գգվանքից զրկված Նազիկը հասունանում է հորը հազվադեպ տեսնելով տանը, ինքն իր մեջ ամփոփված, մխիթարություն գտնելով իրեն տարեկից, իրենց բարի հարեւանի թոքախտավոր տղայի՝ Թումասիկի, ընկերության մեջ: Արբունքի շեմին նոր ոտք դրած Նազիկը, կարեկցանքից դրդված, առանց գիտակցելու կենակցում է Թումասիկի հետ: Հայրը եւ մեծ մայրը անտեղյակ այդ կենակցումից, ամուսնացնում են նրան գյուղի համեստ ընտանիքից, քաջի համբավ ու հարգանք վայելող գյուղի երիտասարդներից՝ Զաքարենց Զաքարի հետ: Ընդունված բարքերի համաձայն Զաքարը մինչեւ հարսանիքը ոտք չի դնում իր նշանածի՝ Նազիկի տունը եւ նրանք իրար հետ չեն տեսակցում մինչեւ հարսանիքի գիշերը:

Զմռան ձյունոտ ու ցուրտ հարսանիքի գիշերը, հարսանքավորների մեկնումից հետո, երբ հարսն ու փեսան առանձնանում են իրենց ամուսնական առագաստում, բացահայտվում է, որ Նազիկը կույս չէ, «ծակ պտուկ» է: Այդ ժամանակ այդպես են անվանել ամուսնության առագաստին անաղարտ, կույս չհասած աղջիկներին: Դա սոսկ անվանում չի եղել, այլ՝ դաժան ճակա-

տագիր այդ անունը կրողների համար: Նույն այդ բարքերի պարտադրանքով աղջկա կույս չլինելը բացահայտվելուց հետո փեսան պարտադրված է եղել իր տանը չպահելու, անմիջապես դուրս վռնդելու անպատիվ աղջկան: Դա հայ ավանդապահ գյուղի հնուց եկած օրենք դարձած սովորույթներից է եղել, անգութ մի օրենք, որը ի վերջո ինքնասպանության է մղել այդ անունը ստացածներին: Խստաբարո գյուղը մերժել է ընդունել նրանց: «Ծակ-պտուկները չէին ապրեր», այդպես էր գյուղի օրենքը:

Եվ Զաքարը խաբված, քաջի իր արժանապատվությամբ խստագույնս վիրավորված, կես գիշերին, առանց ժամանակ կորցնելու, փողոց է նետում Նազիկին: Նազիկը վախենալով իր հորից, որի անսիրտ դաժանությունը ոչ միայն իրեն էր հայտնի, այլ նաեւ գյուղին, գերադասում է պատսպարվել իրենց բարի հարեւաններից Օվակենց Օվակի տանը: Այդ պատահական ընտրությունը դառնում է Նազիկի դժբախտության բացահայտման բանալին: Նույն գիշեր նա խոստովանում է, որ իր կուսությունը վերցրել է Օվակենց Թումասիկը, այսինքն այդ տան թոքախտով հիվանդ միակ տղան, որն արդեն մի քանի ամիս առաջ մահացել էր: Դեռ ավելին, պարզվում է, որ Նազիկը երեք ամսական հղի է Թումասիկի ժառանգով:

Բարի տանտիրուհին, Թումասիկի մայրը՝ Օվակենց Հեղնան, մեծ երջանկությամբ է ընդունում Նազիկի համար դժբախտություն դարձած այդ լուրը: Իր որդու՝ Թումասիկի, կորուստի ցավը մեղմող միակ ուրախությունը պիտի լիներ անշուշտ նրա զավակը, որը կյանք էր առնում դժբախտացած Նազիկի արգանդում:

Սակայն Նազիկի մեծ մոր՝ Հաճի Խաթունի համար այն իրողությունը, որ իր թոռը մինչեւ ամուսնություն, թաքուն կենակցել է, ծակ պտուկ է, անընդունելի ու բարձրագույն անպատվություն է, հետեւաբար պետք է ամեն գնով մաքրել մեղքի հետքերը: Բոլորից թաքուն, երեք ամսական հղի իր թոռանը՝ Նազիկին, գիշերով, գյուղի դայակի հետ, առաջնորդում է գյուղից դուրս գտնվող ջրաղացը, ուր ամենանախնական միջոցով վիժեցնում են նրա հղիությունը:

Նազիկի հայրը՝ Հաճի Ստեփանը, Զաքարի կողմից կես գիշերին իր աղջկան տանից դուրս վռնդելը իր դեմ մեծ անպատվություն համարելով, վրեժով է լցվում Զաքարի դեմ եւ որոշում վրեժ լուծել, սպանել նրան: Զաքարը Հաճի Ստեփանի հետապնդումներից խուսափելով ապաստանում է մոտակա լեռներում:

Նազիկի համար սկսվում է անտանելի մի ծանր կյանք: Մի կողմից համատարած արհամարհանք եւ տանը, եւ գյուղում, անվերջանալի վիրավորանքներով լեցված օրեր, մյուս կողմից՝ հարսանիքի դժբախտ գիշերը Զաքարի հետ անկողնում ունեցած հպումից, նրա գրկախառնումից իր մեջ ծնված անբացատրելի սեր ու ձգտում իրեն վռնդած Զաքարի հանդեպ: Հարսանիքի գիշերը

Զաքարը նրա մեջ առաջին անգամ արթնացրել էր կնոջը, կիրքն ու սերը, ու նա այդ գիշեր հասկացել էր, որ հյուծված Թումասիկին նա կարեկցանքից է հանձնվել: Զաքարից մերժված, անպատվված ու հեռու, նա ավելի սուր է զգում նրա հանդեպ արթնացած իր զգացումները եւ ձգտում մեկ անգամ էլ հայտնվել նրա թեւերի մեջ, մեկ անգամ էլ ըմբոշխնել նրա առնականությունը:

Մինչ Նազիկը իր այս ապրումների հետ է, Հաճի Խաթունին հաջողվում է գյուղում ունեցած իր իշխանությամբ շրջանցել ծակ պտուկներին սահմանված ճակատագիրը եւ իր թոռանը՝ Նազիկին, երկրորդ անգամ ամուսնացնում է գյուղի հարգված հարուստ ընտանիքից՝ Կարմիրենց Սահակի հետ:

Կարմիրենց Սահակը, որը հազիվ երկու տարվա ամուսնացած կորցրել էր կնոջը, տարվում է Նազիկի գեղեցկությամբ եւ ամուսնանում նրա հետ, անտեսելով հասարակության աչքին նրա վարկաբեկված վիճակը:

Մինչ Նազիկը փորձում է համակերպվել իր նոր ճակատագրին՝ Սահակի հետ ամուսնությանը, նրա հորը՝ Հաճի Ստեփանին, լեռներից գյուղ են բերում մահացու վիրավորված, որը մի քանի օր հետո մահանում է: Գյուղացիները այդ սպանությունը վերագրում են Զաքարին: Հաճիի անակնկալ մահը Զաքարի հանդեպ վրեժի մի նոր ալիք է բարձրացնում Հայրապենց գերդաստանում: Այդ շրջանում նոր էին սկսվել հայ-թուրքական բախումները: Հեռավոր շրջաններից գյուղ էին թափանցում հայերի դեմ թուրքերի գործած վայրագությունների լուրերը: Որեւէ աննշան մեղադրանքով թուրք ոստիկանները տակն ու վրա էին անում գյուղը, բանտարկում կամ սպանում քաջի համբավի տեր երիտասարդներին: Զաքարը որպես նշանավոր քաջ դառնում է թուրք ոստիկանության հետապնդումների ցուցակում առաջիններից, ուստի եւ գյուղ չի կարողանում վերադառնալ, շարունակում է ապրել լեռներում:

Պարզվում է, ամուսնության գիշերը Նազիկի հետ ունեցած մերձեցումը Զաքարի մեջ էլ անմարելի կրակ է վառել: Այդ կարճ գրկախառնումից նրա մեջ էլ ծնունդ է առել զգացումների մի ամբողջ աշխարհ, իր մարմնի, իր հոգու, իր էության բոլոր բջիջները լեցվել են Նազիկով: Նա զղջում է Նազիկի հետ այդքան անմարդկային վարվելու համար: Լեռան առանձնության, իրեն շրջապատող վտանգի մեջ իր միտքն ու հոգին հանգիստ չեն տալիս իրեն եւ մոռանալով ամեն զգուշություն՝ թուրքի եւ Հայրապենց գերդաստանի հետապնդում, գիշերները լեռից իջնում է գյուղ Նազիկին տեսնելու հույսով: Մինչ այդ, Նազիկի ամուսինը՝ Սահակը հիվանդանում է, նույն անհայտ, մահացու հիվանդությամբ, որը գերեզման էր իջեցրել իր եղբայրներին: Ընտանիքը փորձում է ամեն կերպ փրկել Սահակին, ընտանիքի միակ շառավղին: Կարմիրենց ընտանեկան այդ տագնապի մեջ Զաքարին հաջողվում է տեսակցել Նազիկի հետ: Երկուսն էլ իրար հանդեպ նույն անկասելի մղումով բռնկված, արհամարհելով ամեն վտանգ, տեսակցում եւ կենակցում են Կարմիրենց տանը, հիվանդ

պառկած ամուսնու հարակից սենյակում: Իրար գրկում նրանք վերանում, մոռանում են իրար պատճառած եւ ցավ, եւ վիրավորանք, եւ դժբախտ կյանք, գյուղի խավարամիտ դաժան օրենքներ: Նրանք միայն սեր են ըմբոշխնում ու գիշերային այդ թռուցիկ հանդիպումները վերածում երջանկության, իրենց ծանր, տառապանքով լեցված կյանքին ուժ տվող սնունդի: Այդ գաղտնի, կարճ, ահով լեցված տեսակցությունները շուտով բացահայտվում են: Եվ բացահայտողը՝ Հաճի Խաթունը, շատ չանցած մահանում է: Զաքարը մի կերպ փախչում է հետապնդումից ու քաշվում լեռների խորքը: Ամբողջ հարվածը կրկին ընկնում է Նազիկի անձին: Կրկին գյուղի եւ իր ընտանիքի ողջ ատելությունն ու նվաստացումը թափվում է նրա գլխին: Սահակին քաղաք բուժման տանելու պատրվակի տակ Նազիկին ուղարկում են իր հոր տուն: Հայրապենց գերդաստանի համար Զաքարի տեսակցության հանդգնությունը ավելի է թարմացնում ու բորբոքում նրանից վրեժ լուծելու զգացումը: Զաքարի կենդանի լինելու լուրը հասնում է նաեւ թուրքերին: Ինչպես միշտ, որեւէ հայի ձեռք գցելու համար, նրանք խստացնում են իրենց բռնությունները, գյուղում սկսվում են թուրքական ճնշումներն ու խուզարկումները: Հայրապենց գերդաստանը, ցանկանալով մենակ մաքրել Զաքարի հաշիվը, թուրքերին խոստանում են իրենք հանձնառու դառնալ նրան հայտնաբերելու եւ թուրքերին հանձնելու գործին:

Համառ հետապնդումներով Հայրապենց տղաները բացահայտում են Զաքարի թաքստոցը եւ գիշերով պատրաստվում բարձրանալու լեռ, նրան սպանելու: Նազիկը լսելով նրանց ծրագրի մասին, նրանցից առաջ, մթնշաղին, ճանապարհվում է լեռ, Զաքարին զգուշացնելու, փրկելու նրան մահից:

Նազիկի, այդ լուռ ու մունջ աղջկա, գիշերային ինքնազոհաբերության մեջ Զաքարը հայտնաբերում է մեկ այլ Նազիկի, որին ինքը երբեք չի ճանաչել ու գնահատել: Նրա սերը էլ ավելի է կրկնապատկվում եւ նա էլ ավելի է զղջում իր վերաբերմունքով նրան այդքան ցավ պատճառելու համար: Սակայն այլեւս շատ ուշ է: Հոգնած շրջապատի դաժան, անմարդկային հալածանքներից, Նազիկը որոշում է մեռնել իր սիրելի էակի՝ Զաքարի մոտ: Սիրահարները պատսպարվում են անտառի խորքում մի ժայռի ներսում: Հայրապենց տղաները գտնում են նրանց հետքերը եւ որոշում են Նազիկին էլ Զաքարի հետ սպանել, նրա թողած արատից իրենց գերդաստանի անունը մաքրել: Սկսվում է ծանր հրացանաձգություն, որի ընթացքում Նազիկը քունքից վիրավորվում է եւ մահանում Զաքարի թեւերի մեջ: Զաքարը չկարողանալով տանել իր սիրած կնոջ մահը, իր սրով մահացու վիրավորում է ինքն իրեն: Հայրապենց վրիժառու խումբը Զաքարին գտնում է մահացու վիրավորված իր սրով, իսկ Նազիկին՝ իրենց գնդակից սպանված: Ժայռախորշում կատարված սարսափելի ողբերգությունը ազդում է Հայրապենց տղաների վրա: Զաքարի քաջությունը այն-

քան է ցնցում նրանց, որ որոշում են թուրքերին չհանձնել նրա վիրավոր մարմինը: Պատգարակի վրա դրած անընկճելի վիրավոր քաջին նրանք հանձնում են նույն անտառի հայ փայտահատների խնամքին՝ թաքցնելով թուրքերից:

Սյուժեի այս հանգամանորեն ներկայացումը կարեւոր է գործի ամբողջական ընկալման համար:

Օշականը վեպը հրամցնում է չորս մասերով, մոտ քսանի հասնող տարբեր հոգեբանական վիճակները իրար օղակող եւ այն զարգացման գագաթնակետին հասցնող պատկերներով: Այդ մասերը ունեն ենթամասեր նաեւ, ինչպես օրինակ՝ թուրք ոստիկանների գրոհը Զաքարին ձերբակալելու համար, նրա տան պաշարումը, Նազիկի պարտադրական վիժումի ամբողջ նկարագրությունը, Հաճի Ստեփանի կամ Հաճի Խաթունի հոգեվարքները եւ այլն, որոնք ինչպես ինքն է նշում՝ «գրուած են խորութեան՝ dimensionին յատուկ ուշադրութեամբ մը»[1]:

Ըստ իր խոստովանության վեպը ավելի ընդարձակ պիտի լիներ, «եթէ հրատարակելի ըլլալու պայմանէն հարկադրուած՝ չսեղմուէր»[2]: Ուրեմն ստեղծագործական կաշկանդումը առկա է վեպում, իսկ յուրաքանչյուր ստեղծագործող գիտե, թե ինչ է նշանակում թերթում տպագրվելու պահանջներին ենթարկվելը:

Այդ մասերի եւ ենթամասերի հիման վրա իր վեպի կառուցումը նա չի թաքցնում, որ Ստենդալի վեպերի ազդեցությունն է կրում, միայն այն տարբերությամբ, որ դրանք «կը վերածէ լայն կառոյցներու, զանցելով Սթանտալին սեղմութիւնը»[3]:

Իր խոստովանությամբ վեպի կառուցման մեջ օգտվել է եվրոպական, իսկ «մտածումի հանդէպ սէրը ժառանգած է ռուս վիպասանէն»[4]: Այդ վիպասանն անշուշտ Դոստոեւսկին էր: Այս խոստովանությունը հաստատում է, որ ազդվելով եվրոպականից եւ սիրելով ռուսականը, ստեղծել է իրենը, բայց չի ընդօրինակել նրանց: Որովհետեւ «կաղապարները օգտակար են անոնց համար, որոնք սահմանված են մինչեւ վերջը աշակերտ մնալու»: Իսկ ինչպես գիտենք, արդեն 25 տարվա ինքնահիկման, ինքնաշխատության ճգնումով նա դուրս էր եկել աշակերտության սահմանից, որը նշանակում էր նաեւ կաղապարների ազատագրում: Այդ 25 տարիներում նա արդեն գտել էր իրենը եւ համարձակորեն վիպային ասպարեզ մտել:

«Ծակ Պտուկը» աչքի է ընկնում կառուցվածքի ինքնատիպ ոճով ու ամրությամբ: Այնպիսի ճարտարապետությամբ է նա իրար հանգուցում դեպքերն ու

1 «Մայրիներու շուքին տակ», էջ 17:
2 Նույն տեղում, էջ 21:
3 «Համապատկեր», հ. 10, էջ 183:
4 Նույն տեղում:

հոգեբանական բարդ անցումները, վիճակները, այնպիսի անակնկալ բավիղներ է մեր դեմ բացում մարդկային նկարագրում, որ տվյալ կառույցի որ մուտքից էլ մտնես, քեզ գտնում ես հիմնական խնդիրների կենտրոնում: Սա էլ օգնում է վեպի գեղարվեստական միասնությանը՝ սյուժեի, կերպարների զարգացմանն ու դեպքերի բախումին, բարքերի ըմբռնումներին, վեպի շարժման կատարյալ համաչափությանը:

Այն տեսակետը, որ իր վեպերով Օշականը միայն փորձում է կորստից փրկել մեր ժողովրդի անցյալ բարքերը, որն հիմնված է մասամբ իր գրության «Մնացորդաց»-ին վերաբերող արտահայտությանը՝ «որ Օշական փրկած է անդարձ կորուստէ իր ժողովուրդէն ու անոր դրացիէն՝ թուրքէն անփոխարինելի բարքի մթերքներ», ոչ միայն սահմանափակում է գնահատել նրա արժեքը, գնահատել նրա անհրաժեշտությունը մեր ըմբռնումների, մեր կենսագրության համար, այլեւ խանգարում է ընկալել իր վեպերի խորությունն ու ուժը: Խանգարում է գնահատել նրա բերած նորությունը վիպային կառույցում, նաեւ ստվերի մեջ է թողնում նրանց գեղարվեստական բարձրագույն արժանիքները, նրա բերած նորությունները կերպարների, նյութի, հոգեկան խորը բացահայտումներով հագեցված զարմանալի լուծումներում: Այս միանշանակ մոտեցումը, կամ ընդունված համոզումը, որը շարունակվում է մինչեւ օրս, ենթակա է ավելի ստույգ մեկնաբանության: Սփյուռքահայ գրականագետ Մ. Նշանյանը նույնպես գտնում է, որ «այն սխալ է իր ահաւոր անբաւարարութեամբ»[1]: Այդ **անբավարարությունը** ընդհանրապես նրա վեպերի մակերեսային ընկալումն է, տրվածի խորքերը չկարողանալ չթափանցելու ընթերցողների թերի կարողությունը: Այդ նույն սխալն էլ իր վեպերի բացասական գնահատման պատճառը դարձան: Ոչ միայն «Ծակ Պտուկը», այլ մինչեւ իսկ գլուխգործոց «Մնացորդացը», իր տարողությամբ եւ խորությամբ բացառիկ այդ վեպը, ընդունեցին սոսկ վերնագրի իմաստի մեջ եւ զլացան իրենց «մեկնողի հասկացողությամբ» խորանալ նրա էության ու ասելիքի մեջ: Անփույթ այս վերաբերմունքով փորձեցին մինչեւ իսկ կասեցնել վեպի հրատարակությունը: «Ծակ Պտուկը» նույնպես համարվելով սոսկ մեր անցած բարքերը ներկայացնող գործ, ոչ միայն չի ընթերցվել, այլ մինչեւ օրս նույնիսկ ուշադրության, գրականագիտական ուսումնասիրության, լուրջ հետազոտության չի արժանացել: «Տողեր՝ որոնք կը սպասեն եւ պիտի սպասեն դեռ իրենց մեկնութեան, իրենց ամբողջական տարողութեան հասկցողութեան»[2]:

«Ծակ Պտուկը» վեպը ընդգրկում է ոչ միայն բարքեր, այլ բազում հոգեբանական ապրումներ ու հասարակական, քաղաքական բարդ իրավիճակներ, որոնց վրա խարսխված է եղել ոչ միայն հայի, այլ նաեւ մի ամբողջ հզոր պետության՝ Թուրքիայի կյանքը:

---

1 Մ. Նշանյան, Վէպը եւ արդիական սկզբունքը, էջ 94:
2 «Մայրիներու շուքին տակ», էջ 125:

Յուրաքանչյուր մարդ մի մեծ, ինքնուրույն աշխարհ է նրա վեպերում եւ մենք այդ աշխարհում տեսնում ենք մեր ժողովրդին ու նրանց միջոցով թափանցում մեր պատմության մեջ, այնտեղ գտնելով մեր կորցրած դիմագիծը: Նույն ձեւով նա ստեղծեց նաեւ թուրքի դիմագիծը:

Ամբողջովին անտեսված է նաեւ այն հանգամանքը, որ նրա ներկայացրած հայ գյուղը միայն իր բարքերով ու կենցաղով չէ, որ դարձրել է վեպ: Այդ ավանդական օրենքների մեջ խմորվում են քաղաքական արագ աճող իրադարձություններ, այնտեղ ծնունդ են առնում նոր դիմագծեր, իրական բնավորություններ, անհատականություններ, որոնք հետո փոխելու են մեր ազգի ապագան ու ճակատագիրը եւ ամենակարեւորը՝ օրեօր փոփոխվող հայի կյանքի լայն ընդգրկումն է տեղադրված իր վեպում: Սյուժետային նրա անցումներում յուրահատուկ են հոգեբանական դրամատիկ իրավիճակները, սուր բախումներով բարդացված հարաբերությունները եւ զգացմունքների հեղեղով լեցված սիրային տեսարանները: Հազարամյակների ավանդությանը հնազանդ ընթացող կյանքի շղթայում հանկարծ հայտնվում են Նազիկը եւ Զաքարը, ուժեղ անհատականություններ, ժամանակի կաշկանդումներից դուրս բնավորություններ, որոնք իրենց սիրո հաստատակամությամբ փշրելու են ընդունված բարքերն ու սահմանված բոլոր օրենքները:

Սխալ է Յ. Պերպերյանի այն համեմատությունը, որ «Յունական ողբերգութեան մը պէս Օշականի մոտ կը հանդիպինք անհատի սեռային խիզախումին եւ գիւղի աւանդութեան-օրէնքի բախումին, ուր մեղքը, ոճիրը, քաջութիւնն ու գիւղական աւանդութիւնը կը միաձուլուին»[1]: Յ. Պերպերյանը այստեղ անտեսում է մի շատ կարեւոր հանգամանք: Հունական ողբերգություններում սիրո խիզախումները նախ եւ առաջ սիրող զույգերի իմացությունից դուրս, ճակատագրորեն նախատեսված իրավիճակներ են, որոնք իրականությունը բացահայտվելուց հետո, անմիջապես փոխում են իրենց ընթացքը: Սիրահարները ոչ թե շարունակում են իրենց կապը, այլ վերջ են տալիս իրենց կյանքին այդ իրականության բացահայտումով: Եվ երկրորդ՝ դրանք արդեն ողբերգության դասավորումով ստեղծված կապեր են: Իսկ Օշականի մոտ Նազիկի եւ Զաքարի սերը ամենադրամատիկ պահում, սովորական մի ակնթարթում ծնունդ առած սեր է եւ իրականության պարզումից հետո, էլ ավելի խելահեղորեն զարգացող, բոլոր արգելքներն ու պատնեշները, հազարամյա բարքերն անգամ ոտնակոխ անելով իրար հասնելու գիտակցական արարք: Ուրեմն այստեղ բացակայում է հունական ողբերգությունների ազդեցությունը եւ որ այդ միաձուլումը միանշանակ չէ: Վկան Նազիկի եւ Զաքարի սիրո խելահեղ զարգացումը հարսանեկան ահավոր գիշերից հետո, կրած զրկանքներից ու նվաստացում, դժվարությու-

1 Յ. Պէրպէրեան, Ճակ Պտուկը կամ Անհատի ծառացումը շրջապատի դէմ, «Բագին», 1984 թ., էջ 8:

ներից հետո կրկին իրարից անկախ իրար ունենալու ձգտումը, նրանց հանդիպումը Կարմիրենց Սահակի պարտեզում, նրա տանը, կամ դայակ Մելեքի տան թաքստոցում: Մինչեւ իսկ միայնակ Նազիկի երթը անտառ, իրիկնամուտին, Զաքարին փրկելու Հայրապենց տղաների վրեժից: Այստեղ հակառակը՝ մեղքը, ոճիրը, քաջությունը առանձնակի դեր են կատարում ավանդույթ-բարքերի պատնեշների դեմ: Թեեւ ճակատագիրը տնօրինող նախախնամության ուժը, որի ազդեցությունից խուսափելու անկարելիության միտքը ղեկավարում է մարդկանց, բայց Նազիկն ու Զաքարը դեմ են գնում այդ ճակատագրին:

Օշականի վեպերը «հարցերը ճակատէն դիտելու անվախ ճիգ մըն է», այսինքն՝ նա չի գունավորում, կամ հասարակության ճաշակի պահանջին չէ, որ հարմարեցնում է իր վեպը: Ճիշտ է գնահատել Մ. Հերկելյանը վիպասանի այդ առանձնահատկությունը՝ «Հաճելի եւ հետաքրքրական դառնալու համար, Օշական երբեք չի զիջեր օրուան ճաշակներուն, ոչ ալ կը բաւարարուի սովորական մակարդակներով: Ան միշտ կը ձգտի ներքին ոլորտներուն»[1]:

Համաձայնվելով Հերկելյանի գնահատումին՝ ավելացնեմ, որ Օշականը ունի իր ուրույն ուղղությունը կյանքում տեղ գտած հազարավոր իրադարձությունները իր ամբողջ խորությամբ գրականություն փոխադրելու: Նա չի մեղմացնում, գունազարդում անհետացող անցյալը, եվրոպական վեպերի «ռոմանների» մելոդրամատիկ սյուժեների վրա չի կառուցում իր վեպը: Ինչպես նկատել է Վ. Օշականը. «Իրեն համար ոճ, լեզու, գրական սեռ ու տեսութիւն՝ թէ անհրաժեշտ միջոցներ են եւ թէ ալ, նոյն ատեն արգելքներ, խոչընդոտներ են՝ իրեն ու կեանքի ապրումին անսահմանելի իսկութեան միջեւ»[2]:

Կյանքի ապրումի իսկությունը դաժան պայքարն էր, որի վրա էր հիմնում նա իր վեպերը: Պայքար ոչ միայն ապրելու, այլ ազատ, բոլոր տեսակի կաշկանդումներից ու պարտադրված օրենքներից ազատագրված ապրելու ձգտման վրա է հիմնված վեպի գաղափարը: Շատերը ելնելով այն հանգամանքից, որ նա ստեղծագործել է գոյապաշտության գրական ուղղության շրջանում, իր վեպերն էլ հիմնված լինելով կյանքի գոյատեւման պայքարի վրա, Օշականին համարել են գոյապաշտության հետեւորդ:

Նախ եւ առաջ ինքը պատասխանել է իրեն այդ ոճի հետեւորդ համարողներին իր «Համապատկեր»-ում՝ «Օշական կանգիտանայ իրապաշտութիւնը իբր իր կողմէ որդեգրուած վարդապետութիւն»[3]:

Առաջին՝ մենք ոչ մեկ պատճառ ունենք չընդունելու իր անձի հանդեպ անաչառ ստեղծագործողի այս երաշխիքը: Երկրորդ՝ «Ոչ Պտուկը» ինքնին հաստատումն է իր տված երաշխիքի:

---

1 Մ. Հերկելեան, Մինչեւ ո՞ւր, էջ 137:
2 «Բագին», էջ 11, 1998 թ.:
3 «Համապատկեր», հ. 10, էջ 103:

Եվ երրորդ՝ ինչպես նկատել է Վ. Օշականը, «Օշական իր ճամփով կը հասնի իրապաշտութեան բոլորովին մէկ տարբեր սահմանումի»[1]:

Ո՞րն է այդ «սահմանումը»: Դա կյանքի այն ընդարձակ փոխադրումն է, որը աստիճանական աճ է ապրում իր ստեղծագործություններում: Իր պատմվածքներում կյանքի դրվագներից սկսվելով, իր վեպերում հասցնում է ամբողջական ծավալի եւ այդ ծավալում ընդգրկում տարբեր շեղումներ, որոնք հեղեղի պես հորդում են իր վեպերի տարբեր մասերից, լիցքավորելով, ընդլայնելով իր ասելիքը: Նրա անցումները արագ են, մանրամասն նկարագրություններով ու վերլուծումներով եւ նաեւ իր անմիջական միջամտությամբ լեցված: Եվ զարմանալին այն է, որ սովորաբար, որքան շատանում են շեղումները, այնքան ավելի է բարդանում նրանց հավաքագրումն ու այնտեղ նետվածի արդարացումը: Այստեղ է ահա Օշականի ինքնատիպությունը եւ գոյապաշտության հերքումը: Նա չի հետեւում արվեստի ոչ մեկ սահմանումի, ոչ մեկ կաղապարի: Ընդարձակվում է այնքան մինչեւ բավարարված է իր ասելիքով, որը միշտ անսահմանորեն առատ է անշուշտ, եւ այդ բազմազանությունը ուզած պահին աննկատելիորեն կապում, հավաքագրում է զարմանալի բնականությամբ ու արվեստով: Չմոռանանք նաեւ, որ գոյապաշտության, «էկզիստենցիալիզմ»-ի մեջ ես-ի գերիշխանությունը ստեղծագործության հիմնական առանցքն է կազմում: Բարոյական եւ բարքերի ըմբռնումներում գերիշխողը անհատի շահերն են հանուն կյանքի: Ընդհանուրի՝ հասարակական, բարոյական ըմբռնումները՝ հայրենիք, ժողովուրդ, ազգ հասկացողությունները միանգամայն բացակայում են: Ասպարեզում անհատն է՝ իր ես-ը, որը ոչ մի բանի առաջ չի կանգնում իր պահանջները բավարարելու համար: Իսկ Օշականի վեպերում ես-ը, այդ ես-ի՝ անհատի, միայնակ պայքարը ապրելու համար բացակայում է: Կյանքի, ապրելու պայքարը անհատից տարրալուծում է ժողովուրդ, ազգ հասկացողության մեջ: Նրա ներկայացրած մարդիկ սոսկ գոյատեւելու, իրենց կյանքը փրկելու, կամ իրենց հաճույքների համար չէ, որ ապրում են: Կյանքը նրանց հեշտորեն չի տրվում, նրանք խլում են այդ կյանքը, պայքարով պոկում, վաստակում, իրենցը դարձնում: Ապրում են բնությունից օժտված լավ ու վատ մարդկային զգացողություններով եւ միաժամանակ իրենց մեջ արմատացած բարքերով իմաստավորում իրենց գոյությունը:

Իր կենսագրությունից արդեն գիտենք, որ իր ամբողջ կյանքը՝ մանկությունից սկսած մինչեւ մահ, եղել է գոյատեւման պայքար: Իր ներաշխարհն ու հայացքները ձեւավորվել են այդ տաժանակիր պայքարում: Եվ ապրելու, գոյատեւելու մոլեգին ձգտումը կոփել է իրեն, որը դարձրել է իր գրականության հենքը, հավատամքը, որովհետեւ դա ոչ միայն իր, այլ նաեւ իր ժողովրդի

1 Վ. Օշական, Յ. Օշական 20 տարեկան, «Բագին», 1998, էջ 11:

կյանքն էր: Ապրելու, շարունակություն թողնելու մարդկային հեւքը նա հենց այնպես չի փոխադրել գրականություն, այլ իր մեծ մտածողի վերլուծում պրիզմայից անցնելուց հետո իմաստավորված ու խորացած հանձնել է թղթին: Գոյատեւման այդ կոպիտ ու դաժան պայքարը, որում ծնվել ու հասակ էր առել նա, մենք տեսնում ենք իր այս վեպում: Սեր, ատելություն, կիրք, վրեժի զգացում, սպանության մոլուցք, արյան կանչ, հոգու խռովքներ, ճակատագրի առեղծված, ներքին տվայտանքներ, տառապանք, հնամյա սովորությունների կապանքներ, տգիտության իշխանություն, ահա այս ամենն են պարփակվում նրա ներկայացրած կյանքի գոյատեւման պայքարում, որը եւ ժամանակի, եւ իր ժողովրդի դիմագիծն էր:

«Ծակ Պտուկը» վեպը ստեղծված լինելով իրական եղելության վրա, կյանքի բազմագույն դեմքով է ներկայացված: Ըստ Օշականի՝ «Գրել կը նշանակէ Կեանքը հիւսել»[1]: Իսկ ի՞նչ ենք հասկանում «կեանքը հիւսել» իր բնորոշման մեջ: Ահա իր բացատրությունը՝ «Կեանքը իբրեւ տաք երեւոյթ, ճերմակ թուղթի սեւ տառերը փոխակերպող»[2]:

«Այդ «տաք երեւույթը» անմիջական կյանքի առկայությունն է, նրա զարկերակի շունչն ենք զգում իր տողերում: Այնտեղ անհատը հասարակության դեմք կամ առանձին կերպար չէ, այլ շաղկապված է կողքինին, հարեւանին, ամբողջ գյուղին կամ գավառին, բարքերին, ծեսերին, մինչեւ անգամ ազգային ձգտումներին, ինչպես կյանքում է: Տնով, հարեւանով, թաղերով, ամբողջ գյուղով ապրող մարդկանց կյանքի պատմությունն է բնականորեն մեզ հրամցվում այնպես, կարծես մենք ներկա ենք, քայլում ենք նրանց փողոցներով, ապրում այնտեղ, շփվում նրանց հետ: Օշականը կարողացել է նվաճել կյանքի ռիթմը եւ այն բառերի վերածել: Կյանքը, բնությունը, շրջապատը, հոգեկան զգացումները, մարդկանց փոխհարաբերությունը, բնազդը, այս ամենը համադրված հարաբերությամբ, իր յուրահատուկ նկարագրով է մատուցվում մեզ: Այս ամենի առկայությամբ է, որ մի հսկա սիմֆոնիայի համահնչունությունն է զգացվում վեպում, իրար շաղկապված, իրար լրացնող, իր զարգացման գագաթնակետով եւ իր վերջաբանի հավաքագրված հնչեղությամբ:

Զուտ հայաբնակ գյուղը, ուր կատարվում են «Ծակ Պտուկ»-ի դեպքերը, սովորական, ոչնչով առանձնահատուկ գյուղ է, իր տների, իրար փակած բակերի ու տանիքների կառույցով, փողոցի աղբյուրներով, որն ինչպես ամենուրեք, այստեղ էլ գյուղի կանանց բամբասատեղին է, իր եկեղեցիով, գերեզմանոցով, արտերով ու շրջապատի անտառածածկ լեռներով, որը միաժամանակ ասպատակների պատսպարանն է: Նկարագրվող յուրաքանչյուր տեղ շաղկապված է վեպի հոգեբանական անցուդարձին, միահյուսված կատարվող դեպքերին,

1 «Համապատկեր», էջ 209:
2 Նույն տեղում:

որով ստեղծվում է տվյալ ժամանակաշրջանի ծավալուն փաստագրությունը:

Օշականի լեզուն հարուստ է, խորը, պատկերավոր, պիրկ, հաճախ էլ դժվար, իր որդու՝ Վ. Օշականի խոսքերով՝ խորդուբորդ: Այնտեղ կարծես «դրոշմված է իր ժողովրդի անցած ուղին»,- ասում է նա: Շատերը այն համարում են դժվարընթեռնելի եւ դրա մեջ են տեսնում նրա գործերի անընթեռնելիության պատճառը: Ճիշտ է, որ նրա բառամթերքում շատ են թուրքախառն բառեր, բարբառային դարձվածքներ, մինչեւ իսկ այսօրվա օգտագործումից դուրս եկած բառեր, բայց հայոց լեզվին լավատեղյակ այս գրողը այդ ամենը օգտագործել է միջավայրի ճիշտ պատկերը տալու, ավելի կենդանի դարձնելու այդ ժամանակաշրջանը եւ ամենակարեւորը այդ շրջանում ապրած մարդկանց ամբողջական նկարագիրը տալու: Ի վերջո լեզուն է ամբողջացնում մարդկային նկարագիրը: Ինքը Օշականը հետեւյալն է պատասխանել այդ մարդկանց՝ «Իրենց կարդացածը չհասկցող մարդո՞ց է մնացեր հայ գրականութեան իրաւ արժէքներուն պաշտպանութիւնը»[1]: Որքան էլ ծանր հարված է եղել իր գործերի անընթեռնելի մնալը, միեւնույն է, նա չի փոխել իր մոտեցումը, իր ոճը, իր լեզուն: Անշուշտ վիպասանի հանդեպ այդ մեղադրանքը սոսկ արդարացումն է այն բանի, որ ինչպես նկատել է Ն. Թարխուտյանը՝ «Հ. Օշականի ոճին վերագրուած խրթնութիւնը անճիշտ որակում մըն է, կատարուած բոլոր անոնց կողմէ, որոնք նախապէս չեն հասկցած անոր միտքը եւ կը նմանին այն մարդոց, որոնք կուզեն արկղ մը բանալ՝ առանց գիտնալու անոր ծածկագիր թուանշանները»[2]: Այդ «թվանշաններում» առանձնակի տեղ է գրավում նրա ոճը, այսինքն այն հյուսվածքը, որով ստեղծում է գրականությունը, ուր առանձնանում է պատկերներ ստեղծելու նրա անկրկնելի կարողությունը: Հենց թեկուզ սկսենք վեպի սկզբից: Այն սկսում է շարժապատկերային տեսանելիությամբ, օրվա, արեւի, շրջապատի շոշափելի գույներով ու ռիթմով: Այնքան շոշափելի է տված նկարագիրը, որ զգում ես փողոցի կամ տան արեւոտ ու ստվերոտ կողմերն անգամ: Շատ հանդարտ, գյուղին հատուկ առավոտվա պարզությունն է սփռվում մեր շուրջ: Կարծես ոչ թե պատմում, այլ վարպետ իր վրձնով նկարում է մեզ համար: Ամառային խաղաղ առավոտվա այդ պատկերում Հաճի Ստեփանի անթափանցելի տան դուռն է զարկում մի հիվանդոտ պատանի՝ Թումասիկը: Այդ թույլ դռան զարկին պատասխանում է մի աղջիկ, որը դժվարությամբ է ներս ընդունում պատանուն: Դռան այդ զարկը, այդ խաղաղ առավոտվա պատկերը, հետո անակնկալորեն փոթորկվելու է, դառնալու է մի ամբողջ ողբերգության կծիկի սկիզբ, մարդկային ցավի ու կորուստների պատճառ: Դժվարությամբ դուռը բացող աղջիկը դառնալու է Նազիկ, անգիտակցորեն դառնալու է կին: Անարգվելու, նվաստանալու է, բայց այդ

1 «Նայիրի» շաբաթաթերթ, 1970, 44:

2 Ն. Թարխուտյան, Օշականի ոճային գլխաւոր յատկանիշը՝ պատկերը, էջ 130:

ճանապարհին ճանաչելու է ինքն իրեն, իր էությունը: Սիրելու է, կյանքից վեր դասելով իր սերը, ոտնահարելու է ընդունված բարքերը եւ իր ընտրությամբ մեռնելու իր սիրած էակի թեւերի մեջ:

Օշականի ստեղծած պատկերներում ձայն կա, գույն ու երանգ, սրտի զարկ: Ահա թեկուզ մի աննշան պատկեր՝ «Ջաղացքին տանիքէն դարաւոր սօսին սկսաւ իր թաց ու կաթկթուն երգը: Ամբողջ շրշիւն ու փափկութիւն: Նազիկին համար մարդկային շրթունքներու եւ հեծեծանքի համ մը տրոփել առաւ ծառին ընդարձակ սիրտէն: Ու հովին հեծին տակը ըսես անոր ոսկորներն էին լացողները, քանի որ երկինքը ամպ չուներ» (էջ 124):

Այսպիսի բանաստեղծական պատկերներով է անվերջ լեցված վեպը:

Այս անակնկալներով, խորության տարբեր շերտավորումներով հագեցված վեպը Օշականը սկզբում պատմելու է, հետո ինքը, որպես մասնակից, իր հաճախակի միջնորդումներով ներկայացնելու, բացատրելու է եղելություններ, որոնք կարեւորագույն դեր են խաղալու վեպում: Կենսագրությունների, բարքերի, սովորությունների մանրամասներ է հրամցնելու, վեպն ամբողջության մեջ ավելի տարողունակ դարձնելով: Մի խոսքով, ինքը ներկայություն է դառնում վեպում, երբեմն այնքան շոշափելի, որ առաջնորդում է մեզ դեպքերի եւ գործողությունների միջով, դառնում վեպի անբաժանելի մասնիկը, ավելի մանրակրկիտ բացատրություններ տալիս մեզ կենսագրական կամ ազգագրական-պատմական առումներով: Իր գեղարվեստական այս ինքնատիպ միջամտությամբ, ընդունված դասական վեպի հասկացողության ու կառույցի մեջ մի նոր ոճ ու ուղղություն ստեղծեց նա:

Պատումի մեծ կտավի վրա տարածեց իր ժողովրդի ապրված կյանքի հատվածները, ուր ընդգրկեց եւ պատմություն, եւ հերոսություն, եւ դյուցազներգություն: **«Այս պատմութեան օրերուն ան** (ժողովուրդը) **կը կռուէր, կը սիրէր կռուիլ»** (էջ 182) (ընդգծումը իմն է): Իր միջամուխ այս բացատրությունը մի ամբողջ ժամանակաշրջան ու ժողովրդի ոգու ծալքեր է բացում մեր առջեւ: Այս նույն բացատրության սկզբում նա տալիս է հետագա մեր ժողովրդի ողբերգային ճակատագրի նաեւ պատճառը, եւ վեպի մեջտեղում, վեպի վերջավորությունից անկախ, դեռ նույնիսկ դրան չհասած, իր հերոսի եւ նույն ժողովրդի անցնելիք սարսափների մասին հայտնում նաեւ: «Անիկա (Զաքարի մասին է խոսքը) տակաւին հեռու էր այն անկարող կատաղութենէն, որով պիտի կրծէր իր հոգին, իր աղիքները, տասնհինգ-քսան տարի ետք, երբ հայկական սարսափներէն ետք հոգեպէս նուաճուած գեղացին գլուխը կախ պիտի արժանանար թափթփուած ոստիկանի մը անցքին, հանդուրժելով անոր թուքն ու նախատինքը ու պիտի չշարժէր» (էջ 182): Առաջին հայացքից վեպի հանգույցի լուծումի հետ կապ չունեցող այս մեջբերումը հետագա մեր ժողովրդի ոգին բնութագրող շատ կարեւոր բանալի է դառնում: Վերլուծելով վեպի

ժամանակաշրջանին հաջորդած տարիների իրադարձությունները՝ նա փորձում էր պատմական հեռանկարի մեջ դիտել հետեւանքները:

Իր համար որպես ստեղծագործողի կարեւոր էր ժողովրդային դիմագծի մանրակրկիտ պատմությունը հասցնել մինչեւ վերջ: «Ծակ Պտուկ»-ի դեպքերը այն ժամանակաշրջանն է ընդգրկում, երբ հայը պաշտպանում էր ինքն իրեն եւ թուրքերի պայքարն էլ հայի դեմ նոր էր պետական ծրագիր դառնում: Սա անհրաժեշտ էր եւ վեպի կառույցի, եւ որպես ընթերցող ճիշտ ըմբռնելու համար տվյալ ժամանակաշրջանը: Իսկ մեջբերման երկրորդ հատվածը, արդեն այդ ժամանակաշրջանից դուրս է, ավելի հետո, բայց կրկին իր հերոսի եւ իր ժողովրդի ապագան ներկայացնող: Ուրեմն պետք էր խոսել այդ մասին: Սա Օշականի մտածված, մշակված ծրագրով ստեղծագործելու կարողություններից մեկն է: Նրա այս եզակի արժանիքն էլ իր գործերը դարձնում են պատմահոգեբանական մեծ ընդգրկումների ստեղծագործություններ:

Նա հաճախ է անդրադարձել գրողի կոչմանը, իրականության հետ նրա կապի առնչությանը, կյանքի բազմաձավալ վերլուծումների գրողի պարտականությանը: Իր վերլուծումներում առաջնահերթ տեղ է գրավել կյանքը իր մերկ իրականությամբ: Քանի որ այս վեպում նա ներկայացնում էր Նիկիո լճի շրջանի կյանքը՝ ապրված 1800-ական թվականներին, բնականաբար անկարելի պիտի լիներ չներգրավել թուրքին, որի ամենօրյա ներկայությունը հայի կյանքի մասն էր կազմում: Վեպի երկրորդ մասում նա ներկայացնում է հայի առօրյայի այդ կողմը: Հայ գյուղերի ընդարձակումով, թուրքերի հետ շփումը ավելանում էր, ավելացնելով նաեւ ազգի ինքնության վտանգը: «Այդ խաուղին մէկ-երկու տարուան մէջ գեղին սահմանները ու պատնէշները խրամատած էր լայնօրէն: Տասը տարի առաջ ամայի խաղավայր մըն էր, այսօր իր քազինոները, սրճարանները, խանութները իրարու դէմ կը շարէր: Հոն կու գային թուրքերը, փաթոցով ու մօրուքով ու կը հրապուրէին գեղին աղքատիկ բայց գեղադէմ տղաքը, զանոնք բարձր վճարումով իրենց հողագործական աշխատանքին վարձելով եւ ուր այդ գեղանի տղաքը կը մոլորէին անոնց կիներէն ու աղջիկներէն հաւատքնին ուրանալով» (էջ 19):

Հայ շրջաններում սկիզբ առնող տեղայնքային, դեմոգրաֆիկ արագ աճող այդ փոփոխությունը լեցված թուրքերի ոտնձգումներով, բնականաբար վտանգ էր ներկայացնում հայ բնակչության ոչ միայն անմիջական կյանքին, այլ գոյատեւմանն ընդհանրապես: Ժողովուրդը ներքին եւ արտաքին երկու միջոց ուներ պաշտպանվելու: Ներքին, այսինքն՝ իր բարքերի ու ավանդույթների խիստ պահպանմամբ, եւ արտաքին՝ զենքով նրանց ոտնաձգումներից պաշտպանվելով:

Դեռ հեղափոխություն հասկացողությունը չկա ժողովրդի մեջ: «Յեղափոխութիւնը ոչ հասկնալի, ոչ ալ մատչելի էր այս տգէտ ու վայրենաբարոյ գեղե-

ռուն» (էջ 173), բայց նոր սերունդը սկսել էր ըմբոստանալ եւ չհանդուրժել ոչ Հաճի Ստեփանի անվերջանալի կռիվները գյուղում, ոչ էլ թուրք ոստիկանների ոտնձգումների դեմ գյուղացիների բարձր կաշառքով ժամանակավոր հանգիստ նվաճելու գործարքները: Նոր սերունդի հետ ծնվել էր նոր հոգեբանություն, որը պայքարի, իր իրավունքը պաշտպանելու հոգեբանությունն էր: Բարքերի, մտածելակերպի ու հիմնականում թուրքի հանդեպ հայի վերաբերմունքի շեշտակի փոփոխությունն էր իր վեպերի առանցքային մասը կազմում:

«Հաճոյք էր այդ բարեկազմ տղաքը ճանչնալ մանաւանդ քաջութեան պսակով մը» (էջ 94): Այդ երիտասարդները, որոնց քաջությունը «ցեղին հազարամեայ գերութեան մէջէն կը բարձրանար», հիմք դրեցին մեր ազգային ազատագրական պայքարին եւ դարձան իր այս վեպի գործող անձինք: Զաքարենց Զաքարը, Փանելենց Նշանը, Պանապաքը, Հաճի Ստեփանը, Հայրապենց տղաները, որոնք իրենց գյուղի, իրենց գյուղացիների իրավունքները պաշտպանող առաջին քաջերը դարձան: Օշականը նրանց տվեց մի նոր անուն՝ ասպատակ, միեւնույն ժամանակ ըստ իր սովորության ներկայացնելով նրանց արածի իմաստն ու պատմությունը: «Այդ օրերուն, երբ յեղափոխութիւնը դեռ անուն ու «ֆիրմա» չունէր, ասպատակը ընթացիկ ու գռեհիկ ոճրագործ մը կը նկատուէր»: Բայց ավելի ուշ, երբ արդեն սիստեմատիկ են դառնում թուրքական կողոպուտն ու ճնշումները, փոխվում է նաեւ ասպատակների դերը: «Ասպատակը գեղին պաշտպանն էր: Անոր անունը լեռներուն վրայ մշտագոյ հսկողութիւն մըն էր: Ան գեղէն դուրս իր ազդեցութեան ենթակայ ընդարձակ սահմաններ ունի» (էջ 210): Ասպատակի կյանքին ու գործունեությանը ավելի մանրամասնորեն ծանոթանալու ենք «Հաճի Մուրատ»-ում, իսկ այս վեպում Զաքարով մենք մակերեսայնորեն ծանոթանում ենք դեռ նոր սկիզբ առնող, անհատների նախաձեռնությամբ զարգացող մեր հետագա ազատագրական պայքարին:

Օշականը իրական կյանքից է վերցրել Զաքարի կերպարը: Ինքն անձամբ ականատես է եղել մի հայ երիտասարդ ասպատակի աներեւակայելի քաջագործությանը եւ որպես նախատիպ օգտագործել է նրան: Թեեւ Օշականը չի խորացնում Զաքարի ասպատակության գործունեությունը, նրա պայքարը դեռ միայն թուրք ավազակների դեմ է, որոնք մեծ վնաս են հասցնում իրենց գյուղի հայության, բայց զգալի է հեղինակի վերաբերմունքը այդ ազատատենչ անհատների հանդեպ: Սրանք ֆեդայիների նախատիպերն են, որոնց հետո իր հերոսներից Զաքարն է միանալու, բայց ոչ այս վեպում:

Բոլոր ազգերի պատմության մեջ էլ քաջերն ու գեղեցիկները յուրահատուկ ժողովրդային սեր են վայելել, նույնպես եւ մեզ մոտ: Հեղինակը այդ ժողովրդային սիրով է շրջապատում նաեւ Զաքարին: Կռվում միայնակ նրա բազկի ուժն ու ճկունությունը, նրա հմայքը գյուղացիների մեջ, նրա զուսպ բարոյական նկարագիրը դյուցազներգության է հասցնում: Նրա անվան շուրջ հյուսված

անցյալի պատմություններն անգամ որպես առասպել դարձած դրվագներ մատուցում վեպում: «Եւ այրած վրանները, դիակները, առանց պզտիկ հետք մը ձգելու սպանդէն: Սուտի մը պէս այս պատմութիւնը նուիրագործեց անոր համբաւը: Ու այն օրէն ասդին անիկա գեղին ուժերէն մէկը նկատուեցաւ: Ու կը սիրէր անոր արու ու հայկական քաջութիւնը իր գեղը» (էջ 58 29): Դյուցազներգությունը լիարժեք դարձնելու համար օգտագործելով գյուղացիների մեջ նրա վայելած սերը, արտաքին գեղեցկությունը միացնում է բարոյական բարձր պահվածքին՝ «Ու անոր պարկեշտութիւնը, որ սուրբի մը պէս ցանկալի ըրաւ իր նայուածքը» (էջ 58 30): Նա չի սահմանափակում գեղարվեստական պատկերի տարածքը, այլ բացում, լայնացնում է, ընդգրկում այնտեղ նաեւ ժողովրդին, նրա միակամությունը եւ ասպատակների գործունեության եւ թշնամու հանդեպ: Զատկվա շաբաթվա թուրքերի հետ բախման ժամանակ Զաքարին են միանում ոչ միայն գյուղի քաջերը, այլ ամբողջ գյուղը մեծով ու փոքրով, երեխաներով, հարսներով ու ծերերով: Հայրապենց տղաները իրենց վրեժը մի կողմ թողած միանում են Զաքարին թուրքերի դեմ կռվելու համար եւ օգնում նրան փախչելու նրանց հետապնդումից: Իսկ վերջաբանում ծանր վիրավոր Զաքարին ոչ թե թուրք կառավարությանը, այլ հայ փայտահատներին հանձնելը, ազգային նույն սերտ կապի արտահայտությունն է: «Անիկա չէր կրնար իր ձեռքովը թուրքերուն յանձնել այսքան արիասիրտ երիտասարդ մը» (էջ 230):

Այս վեպում ասպատակների գործունեության վրա քիչ է կենտրոնանում հեղինակը, հարազատ մնալով ժամանակաշրջանի իրադարձություններին: Վեպի վերջավորության ընդգծելով թուրքերի աճող թշնամանքը հայերի հանդեպ, մեկ անգամ եւս շեշտում է հայերի պայքարի ավելի մեծ ու կազմակերպված անհրաժեշտությունը, որը բնականաբար միայնակ պայքարող ասպատակների ուժից վեր էր արդեն:

Իր խորաթափանցությունը կատարվող իրադարձությունները բացահայտելու եւ գործողությունների ընթացքում դրանք վերլուծելու, առանց խախտելու վեպի կառույցը, կատարելության է հասնում: Դայակ Մելեքի տան շրջափակումը թուրք զինվորների կողմից, Նազիկի քայլերին հետեւելով Զաքարի թաքստոցի հայտնաբերումը, ամբողջ գյուղի վերաբերմունքն ու մասնակցությունը այդ մեզ համար տարօրինակ, բայց իրենց համար սովորական դարձած սպանությունների ու ձերբակալությունների գործողությանը, դրա փայլուն վկայությունն են: Արվեստի փայլուն հմտությամբ նա իրար է միահյուսում ներքին զգացողությամբ առաջնորդվող ամբոխի բախումը թուրքերի հետ: Նրանք գիտեն երբ եւ ինչպես կռվել, ուր իրական կռիվ մղել կամ պարզորեն օդի մեջ կրակել, զոհ չտալու, կռիվը չսրելու համար: Նույն հմտությամբ կապակցում է անցյալը, ներկան եւ ապագան: Հաճի Ստեփանի համագործակցությունը

թուրքերի հետ անցած շրջան է արդեն հայի կյանքում: Ներկան՝ Զաքարի նման ասպատակների դեմ թուրքերի համախմբված պայքարն է, նրանց մեջ ածող քաղաքական ուժ տեսնելով: Իսկ ապագան թուրքերի, տիրոջ իրավունքով, գյուղ ներխուժումն ու մինչեւ իսկ հայերին իրար դեմ օգտագործելու խորամանկ միջոցներն են: Հայրապենց տղաների համագործակցությունը թուրքերի հետ Զաքարին գտնելու եւ իրենց հանձնելու քայլերը:

Նա իր ներքին սուր տեսողությամբ տեսնում էր մինչեւ իսկ մոտեցող քաղաքական աղետը, ինչ անտեսանելի էր այդ ժամանակաշրջանի մարդկանց: «Դեռ երկու ժողովուրդները իրարմէ զատող ատելութիւնը մահուան ստուգութեան մը չէր վերածուած» (էջ 190): Այդ առասպելի, դյուցազներգության մղող բախումներում նա տեսնում էր գալիք սպանդը, իրականությունը, արդեն քաղաքական սուր բնույթ ստացող հայի ու թուրքի հարաբերությունը:

Արվեստի նույն բարձրությամբ, գեղագետի նուրբ վարպետությամբ, այդ անհանգիստ, իրար բախվող աշխարհում նա պեղում է մարդկային զգացումների ու նրանց խոհերի զարգացումները, ներկայացնում անձնական զգացումների, հատկապես տառապանքի հեղեղները, որը կրում են մարդիկ իրենց հոգու խորքերում միայնակ, լռությամբ ու տքնությամբ: Նույն կտուրի տակ ապրող ընտանիքի երեք անդամները՝ Հաճի Ստեփանը, մայրը՝ Հաճի Խաթունը եւ Նազիկը իրենց հոգում կրում են տառապանքի տարբեր թաքուն ապրումներ, նրանցից ոչ մեկը տեղյակ չէ մյուսի ապրումներից, հոգում կատարվող ալեկոծումներից, ինքնաբզկտումներից: Նույն վիճակում են նաեւ նրա մյուս հերոսները՝ Զաքարը, Զաքարի մայրը՝ Մարիամը, Կարմիրենց Սահակը, նրա մայրը, յուրաքանչյուրը առանձին, անձնական մեծ դրամա են կրում իրենց հոգում: Սա չէ՞ արդյոք իրական կյանքը, որն այնպես ուշադրությամբ փոխադրել էր վիպասանը իր ստեղծագործության մեջ:

Մարդկային զգացումները բացահայտելու մեջ Օշականը իրապես անկրկնելի հոգեբան է: Նա մինչեւ իսկ հայտնաբերում, բացում է մարդկային հոգու խորքերում կատարվող զգայական շարժումները: Լեռներում, Զաքարի մեջ Նազիկի հանդեպ ածող զգացումը՝ «կը յառնէր, անդունդէն բարձրացող ոգիի մը պէս, զգացումը ու կը պարուրէր անոր մարմինը, մազերէն մինչեւ եղունգները: Ու կը հաւաքուէր մարմինին զանազան կէտերուն, ծանր ու շօշափելի: Կար անիկա մատներու ծայրին, ուր կլոր կրակի մը պէս կը թրթռար ու անոր միտքը կը տանէր եղերական գիշերին» (էջ 214):

Զարմանալիորեն նա գիտակ է եւ երիտասարդի, եւ ծերունու, եւ կնոջ, եւ պառավի, եւ հիվանդ մեռնող պատանու, եւ երիտասարդ աղջկա հոգում կատարվող փոփոխություններին եւ հոգեբանությանը: Նա նույնիսկ հիվանդության ֆիզիկական երեւույթին է մեկնաբանություն տալիս: Ահա թոքախտավոր Թումասիկի տառապանքից մի պահ՝ «Պրկուեցան անոր երեսները: Ու

կապուտցան անոր շրթները, եւ ուռեցան անոր աչքերուն գունտերը, մինչ կը փոսնային կապիճները: Ու բերնին մէջ զզուելի համ մը մոխիրի, որ սարսափի փոխուեցաւ երեսին վրայ: Արիւն էր կրկին կուլ տուաւ» (էջ 17): Իսկ Զաքարի եւ Նազիկի դժբախտ բաժանումից հետո նրանց առաջին գաղտնի հանդիպումը Կարմիրենց պարտեզում վերածում է բանաստեղծական խորը պատկերի. «Պառկած է ըսաւ Նազիկ: Ու բառը մեղմ էր: Ու բառը միս էր, շարժուն ու թափանցող: Տղուն ականջները կարծես անոր շրթները կառնէին ներս դէպի հոգին: Այս զգայնութիւնը այնքան հզօր էր, որ տաժանքի փոխուեցաւ իսկոյն, տաժանքը իրենց առագաստի գիշերուան: Վախը թէ ամօթը կը թօթուէին անոր ահարկու իրանը: Անձրեւէն թաց տղուն շրթունքը փնտռեց ու գտաւ տաքուկ սենեակէն դեռ չպաղած Նազիկին բերանը: Համբոյրը մեղմ էր, երկար ու միամիտ: Անպատմելի էր կարօտն ու յուզումը» (էջ 237): Ինչպես տեսնում եք, բառը բացակայում է գյուղացու հարաբերության մեջ եւ Օշականը զարմանալի հմտությամբ կարողանում է այդ բացակա բառերը վերծանել, նրանց հոգու ընդերքից հանել չարտաբերված զգացածը: Սովորաբար մեծ բանաստեղծներն են այդպես աշխատում: Նա իրապես բանաստեղծ է մարդկային հոգու ոլորտում եւ վիպային բանաստեղծ, եթե անշուշտ կա այդպիսի բնութագրում:

Իր այս վեպով մենք ճանաչում ենք անպատմելի ողբերգություններ իր լռության մեջ ամբարող գյուղացուն: Առօրյա դժվարությունների ու ապրումների մեջ նա լուռ է, լուռ է ճակատագրի բոլոր հարվածների դեմ, կյանքի բոլոր ողբերգությունների դեմ: Ամեն տուն իր սովորույթների, իր բնազդների վրա հիմնած կյանքն ունի, որը հավաքվում է մի ընդհանուր ծածկի՝ սերունդե սերունդ իրար փոխանցված ավանդույթների ու անխորտակելի բարքերի մեջ: Այդ բարքերի մեջ բառեր ու ճարտասանություններ, մենախոսություններ չկան: Անհատի եւ հատկապես կնոջ իրավունքը սահմանափակված են: Կինը սովոր չէ իր զգացածը բառերի վերածելու: Աղջիկ, կին, տղամարդ, մեծ ու փոքր հասկանում են իրար դեմքի արտահայտություններով, հայացքով: Դարերով ուսումնասիրված, գիտության տեսության սահմաններից անցած, բնազդներով մարդկանց մեջ տեղավորված նշանագրերով են նրանք հաղորդակցվում: Հարսանեկան գիշերը Զաքարի ըմբոստ հայտնվելը աստիճանների գլխին միայն մեկ նախադասությամբ՝ «Սպաննեմ պըտը...», հասկանալի է անհամբեր սպասող իր հարազատներին, որ իրենց հարսը կույս չէ: Կամ Նազիկի միակ եւ վերջին խոսակցությունը Զաքարի հետ: «Ալ կօգտէ քաշածս, ազատէ ինծի: Մեռնիլ է նէ, մեռնիլ: Ալ չեմ դիմանար»: Ի դեպ, ամբողջ վեպում սա Նազիկի ամենաերկար խոսակցությունն է, որ լսում ենք: Կտրուկ, արագ ասված այս խոսքերի մեջ իր ապրած ամբողջ ողբերգության պատմությունը կա, որին մենք արդեն ծանոթ ենք:

Օշականի դիտողականությունը վեր է սովորական մարդկային դիտողականությունից: Դա եզակի ստեղծագործողի դիտողականություն է, որից

ոչինչ չի վրիպում ոչ մեր սովորություններից ու բարքերից, ոչ էլ մարդկանց ներաշխարհի ալեկոծումներից: Նա ոչ միայն տեսնում է, այլ տեսանելի է դարձնում ընթերցողին: Ավելին՝ նա իր տեսած-դիտածը տեղադրում է ժամանակի ճշգրիտ դիմագծի մեջ: Իսկ ժամանակը, ինչպես գիտեք, բարքերի ու սովորույթների վրա հիմնված մի ամրակուռ հաստատություն է, որն անկարելի է խախտել, կամ մտածել անգամ խախտել: Այդ խախտումը փլուզելու է մի ամբողջ շինություն, որի վրա է բարձրանում ազգի բարոյականության, նրա պահպանման ու հարատևման հավատամքը: Այդտեղ մենք հանդիպում ենք երկարատև ուսումնասիրված ու մշակված ծեսերի, սովորույթների, որոնք հիմք են դառնում ընտանեկան, հասարակական ու ցեղային ամրության: Մեզ համար առաջին հայացքից ոչինչ ասող սովորույթների մեջ նրանք նաև հասարակության հիմքը կազմող ընտանեկան ամրության բարքեր են ամբարել: Այդ անուս ու տգետ մարդիկ հարաբերությունների ինչ նրբությունների մեջ են թափանցել: Ըստ ընդունված ավանդության, ամռան երկարատև օրերին, նորահարսին իր ամուսնուց երկար ժամերով բացակա չպահելու համար, կեսուրը հարսին ուղեկցել է արտ, ամուսնուն կեսօրվա հաց տանելու պատրվակով, «Նոր հարսերուն համար միամիտ ու քաղցրագին բանաստեղծութիւն մըն է աս», որի հիմնական նպատակը եղել է երիտասարդ զույգի զգացումը իրար հանդեպ վառ պահել: Եվ տեսեք շարունակության մեջ որքան նուրբ ըմբռնում կա. «Ընդհանրապէս կեսուրը միջոցը կը գտնէ նորապսակ զոյգը մինակ ձգելու, արտին կամ պարտէզին քիչ մը բաց ինկած մէկ կէտին զբաղում մը ճարելով: Այն ատէն հարսին անուշ տեսիլքը ամուսնոյն կը բաւէ կիսելու օրուան կարօտը: Ու անոնց անկողինները հեռու ընող ցերեկը՝ այսպէս լուսաւորուած՝ աշխատողին համար համով ու տանելի կը դառնայ» (էջ 218):

Եվ որտեղի՞ց նրանց մարդկային հարաբերությունների այսքան նուրբ գիտություն:

Ինչո՞ւ է Օշականը այդքան կարեւորություն տվել բարքերին, դրա վրա կառուցել իր վեպը: «Կյանքը բարքերու հանգույց մըն է»,- ասում է նա[1]:

Բարքերը գյուղացու կյանքի խարիսխն են եղել, իր բնազդից դուրս նրա կյանքի միակ գիտությունը, որով առաջնորդվել, ապրել ու գոյատեւել է, այդ բարքերով է ձեւավորվել ազգը: «Ոչ մէկ գնով Զաքար ոտք նետեց իր նշանածին տունէն ներս: Ու անոնք իրարու չդպան մինչեւ պսակին օրը» (էջ 30):

Ընտանեկան անաղարտությունը մաքուր պահելու այս գիտակցումով է առաջնորդվել գյուղացին: Կամ՝ «Գեղին փեսացուները իրենց նշանածէն կը ճանչնան միայն անոր ձայնը»: Այս մեկ նախադասությամբ արդեն մենք տեղեկանում ենք դարերով արմատացած մեր այն բարքերին, որ նշանված աղջիկն ու տղան ոչ միայն իրար չեն հանդիպել, ինչպես Զաքարի պարագայում է, մին-

1 «Համապատկեր», հ. 10, էջ 196:

չեւ իսկ բառ չեն փոխանակել, միայն արտերում կամ հարսանեկան, ժողովրդային ուրախության պահերին երգելով են իրենց հավանական զգացումները փոխանցել իրարու: Եվ այս բարքերը խախտողներին առանձնահատուկ պատիժ սահմանել: «Կարելի չէր ծակ-պտուկը տունին մէջ պահել մինչեւ առտու: Պէտք էր աղջիկը փողոց նետել: Վձիռը ուշ կամ կանուխ կը պարտադրէր ինքզինքը: Ծակ-պտուկները չէին ապրեր: Եթէ անոնք չսպաննէին իրենք զիրենք, գեղը իր արհամարհանքին, դանդաղ ու անզգամ ծաղրանքին տակ կը չորցնէր զանոնք» (էջ 59): Ինչպես տեսնում եք, այդ բարքերը իրենց նրբության կողքին, նաեւ աններելի ու դաժան են այն խախտողների պարագային: «Մահը, հիւանդութիւնը, նոյնիսկ նիւթական դժբախտութիւնները կրնան զինաթափ ընել գեղացին, բայց անիկա մեղապարտ կնոջ դատը կը սկսի առնուազն հեգնելով, յետոյ զայն կանցնէ իր երգերուն մէջ: Չի մեռցներ, (աւելի առաջ ատիկա էր գեղին օրէնքը) բայց կարհամարհէ զայն անհուն այն կոշտութեամբ, որ հողէն մթերուած է իր մատներուն, ինչպէս իր շրթներուն, դարաւոր մարզանքով» (էջ 82): Փակագծի մեջ առնվածից տեղեկանում ենք նաեւ, որ ավելի վաղ ժամանակներում բարքերը ավելի խիստ են եղել: Ուրեմն բարքերը միշտ փոփոխության են ենթարկվել նաեւ, որն իր շարունակությունն է գտնում հենց այս վեպում: Թուրք կառավարության կազմավորումը սկսել էր խարխլել ժողովրդի սահմանած ներքին օրենքները: «Գեղին մեծնալովը, թուրքերուն հետ կապերուն լայննալովը, մեղքերը շատցեր էին: Դիւրին չէր օտարին աղջիկը ատանկ կէսգիշերներուն փողոց նետել փեսաներուն կամ կեսուրներուն «հաճոյքին» համար, ինչպէս վճռած էր երկու տարի առաջ կառավարութիւնը, պատժելով բանտով ու տուգանքով մայր մը ու տղայ մը: Բժիշկները քննեցին աղջիկը եւ մեղաւոր գտան «անճարակ» փեսան» (էջ 63): Ուրեմն այդ բարքերը, որքան էլ ստուգված, ժամանակի առումով անշուշտ, նաեւ սխալներ են ունեցել, սխալ ներգործություններ եւ ժամանակների փոփոխությունը վերանայումի է ենթարկել դրանք: Դա միայն փեսացուների հարցը չէ, դա քարացած մի ամբողջ բարքերի ճշտության լինել-չլինելն է նաեւ: Լեռներում իր կյանքը մաշող Զաքարի համար անվերջ վերլուծման, քննության ենթակա հարց է իր կյանքը հիմնահատակ կործանած ծակպտուկ բառը, բարքերի կողմից պարտադրված: «Ծակ պտուկը» - ո՞վ դրավ այդ պիտակները»,- հարցնում է նա ինքն իրեն անվերջ եւ եզրակացնում՝ «ինչ խեղճ է մարդոց խելքը»: Այս մեկ պարզ նախադասությունը ամենաազդեցիկ մեղադրանքն ու ընդվզումն է ընդունված բարքերի դեմ: Դա նշանակում էր, որ արթնանում էր անձի ինքնագիտակցությունը եւ անհատական մտածելակերպը արդեն իրեն զգացնել էր տալիս:

Օշականը այդ փոփոխվող դարի ոգին մեզ փոխանցում է տարբեր խորհուրդներով լեցված: Այդ խորհուրդների մեջ ներփակված է մեր ժողովրդի սրտի զարկը, թրթիռը, կոկորդի ելեւէջները, որով իմաստավորվում եւ հարս-

տանում է նրա դիմագիծը: Դեռ «Մեհյան»-ի էջերից նա կարեւորություն էր տալիս այդ ամենին: «Մեզի կսպասեն մեր դաշտերուն վրայ անտես երազի մը պէս շղարշուած բոլոր այն անանուն եղերգութիւնները, որոնք մեր գեղջուկներուն շրթունքներէն վար կը վազեն... ու ինչեր կան տակաւին...»[1]: Գիտեր, որ ժողովուրդը իր կյանքն իմաստավորել էր իր հոգուն հարազատ պատմություններով ու երգերով, որոնք իր ապրածով շաղախված հարստություններ են եղել: Եվ Օշականը առանձնահատուկ երկյուղածությամբ է մոտենում ազգային այդ հարստությանը: Նա պատահականորեն չի օգտագործել Նազիկի մոր գեղեցկության մասին հորինված երգը: Երգը ժողովրդի զգացումների ակունքից բխող հոգեկան ապրում է, եւ երբ մի դեպք երգ է դառնում, ուրեմն ժողովուրդը իր սրտի մեջ է ներառել այն:

«Սիրեմ Նազիկ, ընքուընիդ
Օսկի գըրիչէն քաշած» (էջ 38):

Այս երգով է սկսում Օշականը Նազիկի մոր ողբերգական կյանքի պատմությունը, որը թեեւ արդեն մեռած է վեպի սկզբում, բայց ինչպես ժողովրդի մեջ, այնպես էլ կենդանի է վեպում: Եվ հետաքրքիր կերպով այդ կենդանությունը նա պահում է մինչեւ վերջ եւ այս երգի վերջին տողը փոխելով ավարտում Նազիկի կյանքի նույնքան ողբերգական էջը:

«Սիրեմ, Նազիկ, ընքուընիդ
Արուն-արցունքէն քաշած» (էջ 319):

Նույն ներդաշնակությամբ է ներկայացնում նաեւ բարքերի եւ ավանդույթների մասը կազմող ժողովրդային ծեսերը, որին գյուղացին հավատարիմ մոլեռանդությամբ է հետեւում: Դա եւ ուրախության, եւ մահվան, եւ թաղման ու գերեզմանոցային ծեսերն են, ուր ողջ գյուղն է մասնակից դառնում, այնպես, ինչպես կրոնական տոներին: «Բացառիկ հանդէսներէն մահը ամենէն նուիրականն է ու կը խորտակէ բոլոր քէները»: Այս պերճախոս բացատրությունն ինքնին ամեն ինչ ասում է մահվան հանդեպ ունեցած գյուղացու վերաբերմունքի մասին:

Հաճի Ստեփանի, Հաճի Խաթունի մահվան տեսարանները Օշականը մեզ է հրամցնում իր բոլոր մանրամասներով: Այստեղ չարի ու բարու մարդկային մտածումին գոհացում տվող փոխհարաբերությունն է առկա: Ըստ ժողովրդի համոզումի չարը պատժվելու է ու գործած մեղքերն էլ բացահայտվելու, քանի որ ոչինչ է գաղտնի մնում կյանքում: «Ու կը հաւատար գիւղացին, թէ հոգէառ Գաբրիէլին ետեւէն ինչ կատաղած սատանաներ ճամբայ ինկած էին թելիկ-թելիկ, մազ-մազ քակելու համար Հաճիին դժբախտ հոգին մեղքին պիղծ ձիւթէն: Ով գիտէ ինչ անյայտ ոճիրներ ու անկարելի խոստովանութիւններ պտի ժայթքէր շրջապատին վրայ» (էջ 151):

1 «Մեհյան», թիվ 3, էջ 40:

Օշականը մեծ վարպետությամբ այդ սովորությունը օգտագործում է կյանքի մեկ այլ հարաբերություն ստեղծելու համար: Նրա մոտ մահը վերջ չէ, այլ պարզ դադար ճակատագրի կողմից սահմանված: Այդ դադարից հետո այն նոր ընթացք է ստանում ապրողների համար: Հոր գերեզմանին սգացող Նազիկի զգայացունց երգի ձայնը դարձնում է ապրելու, մահվան ու նոր կյանք ստեղծելու մեջ ձգվող մի կամուրջ: Այդ վշտալի ձայնը բորբոքում է իր կնոջ գերեզմանին սգացող Կարմիրենց Սահակի հոգում կրկին սիրելու տենչանք: Այդ ձայնով իրար է կապում երկու դժբախտ մարդկանց՝ Նազիկին եւ Սահակին:

Այդ ձայնը նաեւ լեռներից վար է բերում մահվան վճռով դատապարտված ասպատակ Զաքարին, որը թաքնվելով գերեզմանոցի ցանկապատից դուրս՝ «թաւուտի մը կուշտը, հրացանը ծունկին, կը խմեր անոր ձայնը, ինչպէս մէկը, որ քաղցրութեան լիճի մը մէջ կը սուզուի ու չի կշտանար» (էջ 212):

Գերեզմանից իր երգի մեջ ճակատագրի ողջ դժբախտությունը ներդրած, ուժասպառ վերադարձած Նազիկի համար, Զաքարի թողած հիշողությունը, մեկ անգամ եւս նրան ունենալու կարոտը, դառնում են ամենօրյա տենչանք ու միեւնույն ժամանակ իր անտանելի կյանքի միակ սփոփանքը: «Անոր գիրկին, բազուկներուն բոլոր ապահովութիւնը կը տիրեր իր մէջը: Ու անոր հետն էր ան, օրուան բոլոր պահերուն, երբեմն լացին ու գործին իսկ մէջը: Ու կը սիրեր զայն, բառին հագցնելով մեր գիտցածէն տարբեր տարողութիւն» (էջ 209): Նազիկի այս ապրումների կողքին հայտնվում է մի կողմից Նազիկին տենչացող, մյուս կողմից՝ իր այդ զգացման համար մեռած կնոջ հանդեպ դառնորեն մեղանչող Սահակի ապրումները: «Ու անիկա մտքովը կը մերկացներ լացող աղջիկը ու կիյնար անոր ծոցը ու կը հեծկլտար, երակները ծամելով: Ու զարհուրած իր սրբապղծութենէն անիկա գրեթէ կը վազէր վեր, դէպի հողը իր կնիկին» (էջ 207): Սահակի այս ինքնաբզկտիչ ապրումների կողքին գալիս է Զաքարը, իր հաստատուն, ժայռի պես ամուր, ժայռը փշրող զգացումներով հանդեպ Նազիկը: Այս երեք կերպարների ապրումներով երեք տարբեր մարդկային աշխարհներ է բացում հեղինակը եւ միայն այդքանով չի բավարարվում: Հանկարծ նույն իր գրչի զորությամբ նա փոխում է վեպի ընթացքը: Հաճի Խաթունի խորամանկ նախաձեռնությամբ Նազիկին ամուսնացնում են Կարմիրենց Սահակի հետ: Բարքերի, ավանդույթների խստապահանջ հետեւորդ ժողովուրդը տեղի է տալիս: Ծակ-պտուկ Նազիկը ոչ թե քարկոծվում, արհամարհվում, ինքնասպանության է դիմում, ինչպես ընդունված էր, այլ հակառակը՝ նոր կյանք է սկսում: Դեպքերի այս շրջադարձում ավելի է հաստատվում հեղինակի վեպը տիրապետելու կարողությունը: Նա նույն համահնչունության մեջ է շարունակում դեպքերի նոր ընթացքի զարգացումը: Գործողությունների շարժումը իրար շաղկապելու հետաքրքիր եղանակով կարծես սկսում է մի նոր էջ վեպի հերոսների կյանքում, որը կրկին զարգացման բարձրակետին

է հասցնում: Այստեղ իրապես շեշտվում է ոչ միայն կյանքը գրականություն փոխադրելու իր հավատամքը, այլ կյանքը բազմազան ապրումներով ու իմաստով վեպը բացելու նրա ապշեցուցիչ կարողությունը:

Գյուղում կիրքը բոլորովին այլ բնույթ ունի, քան քաղաքում: «Քաղաքներու մէջ սեռային յիմարութիւնը դիւրաւ կը ծարէ համոզիչ պիտակներ»: Այս «համոզիչ պիտակներու» բացակայությունը գյուղի կիրքը դարձնում է բարոյականության խստագույն միջոց, զուրկ արդարացուցիչ հանգամանքներից: Ինչպես կյանքում, այնպես էլ նրա գործերում կիրքը միանշանակ չէ, միայն սեռային, անկողնային, հաճույք չէ: Կրքի խանդով բռնկված նրա կերպարները հաճախ մարդասպան են դառնում, ինչպես Հաճի Ստեփանը, հաճախ իրենց անտանելի կյանքը կրքի հեռավոր ձգտումով լեցնելով տանելի դարձնում՝ Նազիկի պարագային, երբեմն խորտակված հոգու վերազարթնում է դառնում՝ Կարմիրենց Սահակի պարագային, հաճախ այն մղում է սխրագործությունների՝ Զաքարի դեպքում, հաճախ էլ այն դառնում է առաջնահերթ հաճույք ու կործանում տվյալ անձին՝ Հաճի Մուրատի պարագային: Գյուղացու կյանքը հիմնված է կիրքը ոչ թե որպես ֆիզիկական վայելք ընդունելու, այլ որպես սերունդ բազմացնելու գիտակցության, բարքերի վրա: Սերունդի, ցեղի շարունակության վրա է դրված կին եւ տղամարդ սեռային փոխհարաբերությունը այդ ժամանակաշրջանում: Ահա թե ինչու վիպասանը կյանքի բուն արգանդը գյուղն է համարում, ուր դեռ անարատ են պահվում ոչ միայն ավանդույթները, այլ նաեւ սեռային հարաբերությունները: Եվ այդ վիճակից դուրս եկողները անմիջապես նկատելի են ու պատժի արժանի: «Գեղը կը ճանչնայ, անանուն, բայց հանրածանօթ զգայարանքով մը, իրենց հոտէն, այտի միսերուն պառկուածքէն ու ռունգերուն ծիրէն այդ կնիկները, որոնք իրենց ծոցը ինկող արուները կը ծծեն անդուլ շաղապատումով ու կը սպառեն զանոնք» (էջ 225):

Վեպի ընդգծված առանձնահատկությունն է անհատի կրքի, սեռային խիզախումը, որն առկա է Օշականի բոլոր գործերում:

Գյուղի համար այս որակավորմանն է պատկանում Նազիկը, որին բնությունն օժտել է հախուռն կրքով, որի աստիճանական զարգացումը մեր առջեւ բացում է վիպասանը կնոջը բոլոր զգայարաններին գիտակ մարդու հիացումի արժանի նրբությամբ: Օշականի մոտ թաբուներ չկան: Նա մեծ գեղագետի վարպետությամբ ներկայացնում է անկողնային, սեռային հարաբերությունները: Առանց կաշկանդումների նկարագրում է դեռ միամիտ, առանց կրքի, կարեկցանքից դրդված Նազիկի տրվելը Թումասիկին:

Ո՞վ է կինը այդ հասարակարգում, ի՞նչ իրավունքների տեր: Այս հարցադրումն է իր վեպի խորքում:

Ընդունված սովորության համաձայն, առանց հարցնելու Նազիկին ամուսնացնում են: Մայր դառնալու անծանոթ ապրումների մեջ դեռ նոր ոտք դրած,

պարտադրաբար վիժեցնում, ստիպողաբար ամուսնացնում են երկրորդ անգամ, գյուղի առաջ ծեծում, խայտառակում: Սա է հիմնականում կնոջ վիճակը այդ օրերին: Եվ Օշականը բոլորովին նոր իմաստ ու դեր տվեց կնոջը իր վեպերում: Այդ դերը ոչ թե միայն մակերես է, այլ խորք, մարդկային ապրումների շերտեր, որոնցով լեցուն է կինը: Կնոջ ներքին զգայարանները ճանաչելու նրա կարողությունը հասնում է զարմանքի: Այնպիսի նուրբ շերտեր է բացում կնոջ զգացումների մեջ, այնպիսի գույներով հրամցնում, որ կին լինելով մնում ես ապշած, թե ինչպե՞ս է նա տեսել ու զգացել այդ ամենը կնոջ մեջ:

Վեպում բարձրագույն վարպետությամբ նա բացում է Նազիկի ներաշխարհի յուրաքանչյուր ծալք՝ տառապանքի, ցավի, խելակորույս սիրո, նույնքան խելակորույս կրքի, տարփանքի, ըմբոստության: Արհամարհելով ամեն վտանգ, հիվանդ ամուսնուց, նրա մորից, իր մեծ մորից թաքուն նա ընդունում է Զաքարին, իր մեջ կուտակված կարոտով կենակցում նրա հետ, որն ամբողջովին ինքնամոռաց սեր է ու նվիրում: Նրանց գաղտնի հանդիպման, իրար տրվելու պահը դատապարտման զգացում չի արթնացնում: Մոռանում ես անգամ ընտանեկան բարոյական օրենքների ոտնակոխումը: Մաքուր սեր ու մերձեցում ես տեսնում եւ տանջվում ես նրանց բաժին ընկած անողոք ճակատագրի համար:

Մյուս կողմից Նազիկի եւ Սահակի անկողնային հարաբերության մեջ նվաղած Սահակի անկարողությունը Նազիկի ծով կրքի հանդեպ մարդկային ցավ ու կարեկցանք է հարուցում: Սակայն սխալ կլինի այն բնորոշումը, որ Նազիկը միայն կրքի կապանքների դեմ է պայքարում: Նա ոչ միայն իր զգացումների, այլ նաեւ իր մարդկային իրավունքների պահանջատերն է: Նրա ամուր պահվածքը Զաքարի առջեւ հարսանեկան չարաբաստիկ գիշերը, Զաքարի «Ո՞վ էր» հարցին համառորեն չպատասխանելը, Զաքարի հետ տեսակցելու նրա որոշումը, այս ամենի մեջ ի հայտ է գալիս իր ճակատագրի տեր կինը: Ինքն է ուզում տնօրինել մինչեւ իսկ իր խաթարված կյանքը, առանց որեւէ մեկի միջամտության, առանց ուրիշի կողմից դրված արգելքների:

Ամբողջ վեպի ընթացքում Նազիկը միայն մեկ-երկու փոքրիկ նախադասություններ է ասում: Այնքան կարճ են այդ նախադասությունները, որ մենք նույնիսկ իր ձայնը չենք կարողանում որոշել: Բայց վեպի վերջում բացվում է տառապած, մինչեւ հոգու խորքը շրջապատի անարգանքից պատառոտված կնոջ ներաշխարհը: «Ալ չեմ երթար: Ալ կօգտէ քաշածս: Մեռնիլ է նէ, մեռնիլ, ալ չեմ դիմանար» (էջ 295): Սա բողոք չէ, այլ տանջված հոգու ճիչ: Զայրույթ բարքերի, սովորույթների դեմ, որոնք իր դժբախտության հիմքը դարձան: Իր կյանքին տեր կանգնող մարդու հասունացմամբ է նա որոշում իր ճակատագիրը՝ մահը, որը ազատելու է իրեն տառապանքներից: Հնի եւ նորի բախումներում միշտ էլ զոհեր են լինում եւ այդ զոհերն են դառնում նորը ստեղծողները:

Թեեւ չկան արդեն այդ հին բարքերը, բայց Օշականի վեպերում կենդանի են նրանց զոհերը՝ Նազիկները, Զաքարները, Սողոմները, Աղվորները:

Ընդհանրապես Օշականի ստեղծած կանացի կերպարները իրենց բազմազանության մեջ ամուր են, հաստատուն բնավորությամբ, ինքնատիպ: Հաճի Խաթունը իր իշխող, կյանքի ապրած դասերով կոփված, բարքերին գերի ու դաժան այն խախտողների, մինչեւ իսկ իր թոռան հանդեպ: Նրան հակադիր Սահակենց հարսը, նուրբ, զգայուն, իր որդու կորստով աշխարհից քաշված, բայց ուրիշների ցավը հասկացող: Դայակ Մելեքը, որի անունը թուրքերենից առնված հրեշտակն է, բայց ոչ մեկ հրեշտակային նկարագիր ունի: Կյանքի դժվարության մեջ կոփված, իր գոյության համար ամեն ինչի դիմող, գործնական ու արի կին: Սահակի մայրը, աստվածավախ, բարքերին հլու, անպարկեշտության դեմ անզիջող ու իր միակ արու զավակի համար իր կյանքը մաշող: Զաքարի մայրը՝ Մարիամը, նույնպես աստվածավախ, բարքերին գերի ու այն խախտողների դեմ անաչառ կին: Հայրապենց հարսերը, այս վերջինները թեեւ առանձին չեն ներկայացված, բայց նույնքան տեսանելի են որպես կերպարներ, գործնական, գյուղում իրենց դիրքը օգտագործող, դաժան ուրիշների սխալների ու անողոք ուրիշների դատը տեսնելիս: Ոչ միայն Նազիկի, այլ Դայակ Մելեքին իրենց ոտքի հարվածներով սպանելը եւ անտարբեր հեռանալը մեռնող կնոջ մոտից ամենախոսուն վկայությունն է իրենց անմարդկային նկարագրի: Եվ այս բոլորի կողքին հակադրաբար նա կերտում է Նազիկի կերպարը, հավաքական ըմբոստության, դարեր բանտված կաշկանդումներից ազատագրվել ցանկացող, միեւնույն ժամանակ նուրբ ու բարի, կանացի շենշող հմայքով լեցուն:

Օշականը գիտե նաեւ դեպքերին ավելի մեծ ընթացք տալ, լայնացնել ընթերցողի երեւակայությունն ու վերլուծելու կարողությունը: «Շատ բան մեր մէջ պատահելէ ետքն է, որ մատչելի կըլլայ մեր դատումին» (էջ 213),- ասում է նա: Դրանք կյանքի այն անբացատրելի խորհուրդներն են, որոնք պատահում են ինչ-որ բան հուշելու մեզ, սակայն ցավոք որքան էլ վաղ են հայտնվում, միեւնույն է, դրանք ուշադրության են արժանանում միայն դեպքը պատահելուց հետո: Այդ պատահար խորհուրդներն է սիրում վերլուծել գյուղացին, դրանցով գտնել ճշմարտության թելը: Գրականության մեջ ճակատագրապաշտություն անունն է կրում դա եւ Օշականը կյանքում ճակատագրապաշտ լինելով դրա ներգործությունը հասկացող մարդու խորությամբ նույնը փոխադրել է իր գրականության մեջ: Վեպի սկզբում, Նազիկի եւ Թումասիկի առաջին հանդիպման ժամանակ, առավոտյան հնչող մեռելի զանգակը, թաղում են մի նորահարսի, սահմռկեցուցիչ, բայց անցողակի է ներկայացվում: Երկու անմեղ պատանիների առաջին մերձեցումը, բախվում, հակադրվում է մահվան հետ, բայց միաժամանակ հուշում է նրանց համար նույնքան տխուր վերջաբան: Եվ այդպես

էլ պատահում է՝ շուտով մեռնում է Թումասիկը: Կամ Նազիկի երազը մահից առաջ, որը նույնությամբ իրականանում է: Սրանք կյանքի անբացատրելի կապերն են լինելիքի եւ տեսլականի միջեւ, որը հեղինակը մեզ է մատուցում բարձրագույն արվեստով: Այս պատկերներով, խորհուրդներով լեցուն այլաբանություններով է Օշականը կերտել իր «Ծակ Պտուկը» վեպը, անմահացնելով Նիկիո լճի շրջանում ապրող հայի կյանքն ու նրա դիմագիծը, գրականության մեջ դրոշմելով ապրված ու անհետացած սերունդի մի ամբողջ կյանք բարձրագույն արվեստով ու ինքնատիպ գույներով: